

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ¹⁾

«Վարդան քաջ նահապետ, որ վանեցեր
զթշնամին, վարդազոյն արեամբք ք" պսա-
կեցեր զեկեղեցի»:

Շարական.

Խաղաղութեան հրեշտակն էր այն օրերին իւր թևերն
տարածել մեր երկրում. մի վեհ անդորրութիւն էր տիրում
Հայոց աշխարհում: Կապուտակ ու ջինջ էր Հայաստանի
երկինքը. ցերեկն արևն էր ժպտում, գիշերն աստղերն էին
իրենց ցոլքով խայտում: Բովանդակ բնութիւնը հրճուանքի
մէջ էր, և միայն հայ մարդը մասնակից չէր բնութեան
այս խրախճանքին. նրա հոգուն փարուել էր մի անբացա-
տրելի թախիժ, նրա սրտին պատել էր մի խորունկ վիշտ...
Ամեն ոք գգում էր անդորրութեան չարագուշակ լինելը:
Այդ այն խաղաղութիւնը չէր, որի ընթացքում մարդու հո-
գին ստեղծագործում է ու յառաջ քայլում: Բնութեան
ժպիտը Յուդայի այն նենգ համբոյրին էր նման, որով
մարդը՝ Մարդու Որդուն դէպի Գողգաթա է առաջնորդում.
օդի՝ այս մեղմութիւնը անեղ փոթորկին նախորդող այն
կեղծաւոր քնքշութիւնն էր, որից յետոյ աշխարհը սուգ է
հագնում, շիւան ու արցունք դառնում: Յիրաւի, իզուր
չէին հայ մարդու հոգու այդ մտորումները: Այնտեղ հեռու
արևելքում երևում էր մի արնեւրանգ ամպիկ, որը հետ-
զհետէ՝ ինչպէս լեռան կատարից պաշտոյ ձիւնի գնդակ՝
ծաւալւում ու լեռնանում էր Հայաստանի ջինջ երկնակա-
մարի վրայ: Պարսից արքայից արքայի, Յազկերտ Բ-ի,
դիւային կրճքումն էր իւր սկիզբն առել այն, որ յետո-

¹⁾ Խօսուած է Մոսկուայի ս. Խաչ եկեղեցում յունուարի 29-ին
1915 թ. Վարդանանց տօնի օրը:

դայում այնպէս ուժգինս ժայթքեց հայ ժողովրդի գլխին և փլատակների ու աւերակների կոյտ դարձրեց մեր դժբաղդ հայրենիքը:

Ազգերի կեանքը նման է անհատների կեանքին: Ինչպէս անհատը յաճախ իր անձնական բարեկեցութիւնը կազմում է այլոց արցունքներից ու տառապանքներից, ինչպէս անհատը ուրիշների արիւնքրտինքի և դիակների վրայ է կանգնեցնում իր ապարանքը, այնպէս էլ Յազկերտ Բ.-ը Պարսից լայնածաւալ պետութեան բարեկեցութիւնը կամենում էր հիմնած լինել Հայաստանի փլատակների ու հայր զաւակների արեան ու ոսկրների վրայ:

«Եթէ հայք թողնեն իրենց հաւատը և յարուեն կրակին ու ատրուշանին՝ Վրացիք ու Աղուանք մերն են ու մերը»: Եթէ Սաշի ու ս. Սւետարանի փոխարէն Հայոց եկեղեցիներում փայլէ կրակն ու ամենագօր արեգակը, ապա հայ ժողովուրդն առանց այլապլութեան կը կորչէ Պարսիկ ծով գրկում, այն ժամանակ կունենանք Հայաստան՝ առանց հայութեան...

Եւ աղմկուեց Հայաստան: Խախտուեց խաղաղութիւնը, խանդարուեց չարագուշակ անդորրութիւնը: Շարժուեց հայ ժողովուրդը և՛ ծեր և՛ մանուկ, և՛ կին և՛ տղամարդ և՛ ազատ և՛ շինական... Հայութեան լինել չլինելու խնդիրն էր դրուած: Ազգովին ապրելու կամ ազգովին ոչնչանալու առեղծուածն էր լուծւում: Եւ երամ-երամ Հայը դիմեց Վարդանի, Ղևոնդի և Յովսէփի առաջնորդութեամբ դէպ Աւարայրի դաշտը, դէպ խաղաղն Տղմուտի կանաչադարդ ափերը:

Երբէք Հայոց երկրում չէր տեսնուել նման համերաշխ գործունէութիւն: Դա մի խելառ խիզախութիւն էր, որին դիմում էր մի բուն Հայ ժողովուրդը՝ կռթնած իր բողկին, ապաւինած ճշմարտութեան, զաղափարի և իրաւունքի Աստծուն:

Իսկ այնտեղ արեւմուտքում մարդկութեան մի խոշոր հատուածը անվրդով դիտում էր մարդկային այս նախճիւրը. — ահա այնտեղ նենգ Յոյնը իր մշտածիծաղ դէմքով,

միւս կողմը գեղխութեան և շուայտութեան մէջ որդնոտած, արդէն տապալուող, հին Հոռովմը:

Անհաւասար էին ոյժերը. — մի կողմը գոռ Պարսիկն անհամար զօրքով ու հպարտ հոգով, որի առաջն դեռ նոր խոնարհուել էր յունական երկրի մի արծիւը, իսկ միւս կողմը անմահն Վարդան՝ իր մի բռն քաջերով: Մի կողմը բիրտ ոյժը, միւս կողմը մարդկային վեհ հոգին՝ իր բարձր թռիչքներով ու տենչերով: Մի կողմը կոպիտ բռնեցքը, իսկ միւս կողմը գաղափարը և մարդկային անսակարկ խիղճը՝ իր վսեմ ձգտումներով:

Եւ անհաւասար այս մարտում ընկան Վարդանանք ու նրանց աչքերը չտեսան սիրած ու փայփայած հայրենիքի աւերն ու կործանումն, իրենց շէնցրած քաղաքների ու գիւղերի մոխիր դառնալը: Անշնչացան նոցա մարմինները, բայց կենդանի է նոցա հոգին, վառ նրանց յիշատակը, որին չի հպուել ժամանակի ու դարերի աւերիչ ձեռքը:

Նահատակների արիւնն, ասում են, ազատութիւն է պարգևում: Մայր երկիրն իր գիրկն առած իւրաքանչիւր դիակի և կաթիլ արեան փոխարէն տասնեակներով է ծնեցնում այն ազատորդիներին, որոնք ցոյց են տալիս Յազկերտ Բին և յազկերտներին, թէ հոգին անմեռ է, գաղափարն առաւել բարձր՝ քան կոպիտ ոյժը, թէ մարդկային վեհ հոգին լռեցնելու, անխարդախ խիղճը կարկամեցնելու համար, բացի Ֆիզիքական ոյժից, անհրաժեշտ է ունենալ նաև մի այլ ոյժ, որը դեռ չկայ և հազիւ թէ լինի:

Այսօր տեսնում ենք արդիւնքը... Հայկական արիւնոտ և խաւարչտին հորիզոնում ազատութեան արշալոյսի վաղորդեան ցոլքերն են երևում... Հասել է ժամը և մեր ազգի դարաւոր իղձերը մօտ են իրականանալուն:

Գալիս են աշխարհի բոլոր ծայրերից անմահն Վարդանի սերունդները, հայութեան քաջագուններն ու ազատորդիներն իրենց մատղաշ կրծքով պաշտպանելու հայրենիքի պատիւը, իրենց մատաղ կեանքով գնելու նրա ազատութիւնը:

Գալիս է միացած ու հզօրացած հայ ժողովուրդը թօ-

Թափելու Իսլամի դարաւոր լուծը, խորտակելու իւր սըրբազան հայրենիքի անարգ կապանքները:

Փանօք և յարգանք Ձեզ հայ նահատակներ, մեր սուրբ հայրենիքի և գաղափարի անսասան զինուորներ: Ձեզ հետ են մեր լաւագոյն ցանկութիւնները, մեր սիրտն ու հոգին: Գնացէ՛ք անվեհեր: Ձեր գործը սուրբ է. արիւնոտ Ձեր ուղին, ծանր Ձեր խաչը, սակայն անմեռ ու անմահ է Ձեր յիշատակը:

Եւ երբ ազատութեան արեգակն իւր կենսաբեր ճառագայթները կը տարածէ նաև մեր ծխացող ու դժբաղդ հայրենիքի վրայ, երբ նորէն կը շէննան մեր գիւղերը, նորէն կը նորոգուին հայ քաղաքները, փոքր ինչ շունչ կառնէ հայ արիւնաքամ ժողովուրդը, այն ժամանակ հայ մանկտին, հայ օրիորդը ուխտի կուգան դէպի Ձեր՝ նահատակներիդ անշուք շիրիմներն՝ իւրեանց արցունքով ցօղելու նրանց, իրենց անմեղ սրտի լաւագոյն իղձերից ու ցանկութիւններից պսակ հիւսելու և զարդարելու Ձեր անպաճոյճ հողաթումբերը...

Այսօր Վարդանանց տօնի հետ միասին, նաև բոլոր հայ նահատակների տօնն է: Աղօթենք նոցա հոգու անդորրութեան և նրանց զգացմունքների ու գաղափարների իրականացման համար... Այդ իրականացումը փշի և տատակի միջով է լինելու, բայց աղօթենք, որպէսզի Տէրը շուտ անցնէ մեր ազգից այս բաժակը, շուտ հեռացնէ նրանից այս նոր Գողգոթան...

ԱՐԱՆԸ ԲԱՆ. ՍԻՄԷՕՆԵԱՆԳ:

